Հաստատում եմ՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական

մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր՝

Ռուբեն Միրզախանյան

ԿԱՐԾԻՔ

Խաչատուր Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարանի

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի

2020թ. հուլիսի 20-ի h. 19 նիստի՝

Նունե Ալբերտի Մինասյանի

«1960-1980 թվականների հայկական գրքային գրաֆիկան»

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»

մասնագիտությամբ

արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Մելիքյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հակոբյանը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստագիտության թեկնածու Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածու Ս. Գրիգորյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը, ասիստենտ Վ. Գամաղելյանը և ամբիոնի մյուս անդամները:

Արագ փոփոխվող ժամանակներում, երբ գիրքը դուրս է մղվում առօրյա կյանքից, առավել անհրաժեշտ է տալ գնահատական և վերհանել դրա արժեքը: Այդ միտումն ունի ներկայացված ատենախոսությունը:

Ատենախոսությունում ուսումնասիրման առարկա է դարձել շուրջ երեսուն տարվա (1960-1980-ականներ) Խորհրդային Հայաստանի գրատպությունը, որում ատենախոսության հեղինակը ձգտել է պարփակ ներկայացնել շուրջ երկու տասնյակի հասնող հեղինակների գործունեությունը:

Ներկայացված թեման մինչ այժմ ուսումնասիրվել է մասնակի և տվյալ աշխատանքը առաջին փորձն է բազմակողմանի ուսումնասիրության:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, որում հեղինակը ձգտել է ներառել աշխատության դրույթները, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, իսկ հիմնական շարադրանքը բաղկացած է երեք գլխից: Աշխատանքը ունի հարուստ հավելված, որն էլ բաղկացած է վերատպություններից և կատալոգից:

Առաջին գլխում՝ «1960-1980-ական թվականների պատմամշակութային իրադարձությունները. Գրքի ձևավորման հիմնական սկզբունքները և ոճական առանձնահատկությունները», դիտարկվում է ուսումնասիրվող ժամանակահատվածում տեղի ունեցող պատմամշակութային իրադարձությունները, գրքերի, մատենաշարերի ձևավորման սկզբունքները և ոճական առանձնահատկությունները:

Առաջին գլուխը իր հերթին բաժանված է երեք ենթագլուխների՝ «Պատմական ակնարկ. Քաղաքական և մշակութային կյանքը 1960-1980-ական թվականներին», «1960-1980-ական թվականների հայկական գրքի ձևավորման հիմնական սկզբունքները և ոճական առանձնահատկությունները», «1960-1980-ական թվականների մատենաշարերի ձևավորումները»:

Երկրորդ գլխում՝ «Ավագ սերնդի արվեստագետների գրքային ձևավորումները», ուսումնասիրվում են ութ հեղինակ, որոնք աշխատել են հիմնվելով դասական արվեստի ավանդույթների վրա:

Ի դեպ, հեղինակը հենվելով սույն գլխում հիշվող արվեստագետների ստեղծագործական գործունեության վրա՝ կարողացել է ներկայացնել հայկական իրականության մեջ 1930-1950-ական թվականների գրքային գրաֆիկան:

«Նոր սերնդի արվեստագետների գրքային ձևավորումները» խորագիրը կրող երրորդ գլխում ներկայացված է ինը հեղինակ, իրենց գրքային աշխատանքներով:

Այստեղ դիպուկ է նկատում հեղինակը՝ սույն արվեստագետները իրենց ստեղծագործություններում հաճախ դիմել են ոչ միայն արվեստի դասական և մոդեռնիստական ուղղությունների, այլև իրենց ավագ գործընկերների փորձին:

Աշխատանքը ամփոփվում է եզրակացություններով՝ որոնցում վերհանված են գլուխներում արծածված հիմնակետերը:

Օգտագործված գրականության ցանկը ներառում է 81 աղբյուր (այդ թվում նաև էլեկտրոնային՝ 6):

Ատենախոսությունն աչքի է ընկնում գեղեցիկ հայերենով, մտքի տրամաբանական զարգացմամբ, արվեստաբանական հստակ մեկնաբանություններով: Ուզում ենք նշել ներկայացված ատենախոսության և՝ գիտական նորույթը, և՝ կատարման բարեխղճությունը, և՝ բարձր պրոֆեսիոնալ մակարդակը:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը:

Այս ամենի հետ մեկտեղ ունենք որոշ դիտողություններ, որոնք հիմնականում կրում են մասնակի բնույթ, բայց կարող են օգտակար լինել ատենախոսությունը գրքի տեսքով հետագայում հրատարակման գործում.

- ցանկալի կլիներ ավելի հստակեցնել գրաֆիկայի կապը գրքի տեքստային բովանդակության հետ.
- առավել գործածվեին մասնագիտական եզրույթները:

Այսուհանդերձ կատարված աշխատանքում առաջին անգամ է վերհանվում և դիտարկվում Խորհրդային շրջանում Հայաստանում գրքային գրաֆիկայի ավանդույթը: Ատենախոսությունը կարող է հիմք ծառայել առանձին, մասնագիտական խորքային ուսումնասիրությունների համար:

Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է: Մեր առջև ուսումնասիրվող նյութի իմացությամբ կատարված գիտական աշխատանք է, որը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ դրա հեղինակ Նունե Ալբերտի Մինասյանը լիովին արժանի է ԺԷ. 00. 03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»

մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝

Սաթենիկ Մելիքյան

Սաթենիկ Մելիքյանի

ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՄՀ գիտ.քարտուղար Մարիամ Իսպիրյան

20.07.2020թ.